



## Դուքեն Սևակ

### Հոգիս

Հիվանդ տերև մը տեսա կանաչին մեջ դաշտերուն:  
Ի՞նչ աղվոր էր գարունը, փափուկ հովեն օրորուն,  
Սիրուն խոտերը դաշտին, ծաղիկներն ալ բյուր գույնով,  
Կը խնդային լոելյայն գաղց արևին տաք գինով:

Բայց գարնային կենսավե՛տ այդ պահին մեջ օրորուն,  
Հիվանդ տերև՝ մը տեսա, կանաչին մեջ դաշտերուն,  
Չորցած տե՛րև մը նիհար, որ զեփյուտին հըպումով  
Մեռելամերձ կը դողար մարգերուն մեջ ակնաթով:

Սիրտս անհո՛ւն ցավով լի, ես հեռացա սըզահար,  
Մատներու մեջ առի զայն ու իր մարմինը նիհար  
Գուրզուրանքով, արցունքով մոտեցուցի շըրքունքիս:

Անժամանա՛կ թարշամած գարնան տերև մ'է հոգիս.  
Ծաղիկներու մեջ կյանքին, զեփյուտին տակ մայիսի,  
Ա՛լ ժըպտալու անկարող, ան կը դողա՛, կը մըսի՛ . . .

Հիվա՞նդ տերև մը տեսա կանաչին մեջ դաշտերուն . . .